

# ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ

13 ՄԱՐՏ 1946


Սրբազան Մատթան մէջ մատուցուած Զայնաւոր Պատարադին յաջորդեց ուղիւ-դրութեան սրտայոյզ օրը՝ Սրբազանին մօտ, որ առանձնապատուի գործունէութիւնը հաճած էր սահմանել պարագաներն ու ժամը, ընդունելու Հայ Ժողովուրդին մէկ փոքրիկ ներկայացուցիչ խումբը իր Վսեմափայլ Գլխուն հետ:

Պապական Յարկարածին փառահեղ

դահլիճներէն մէկուն մէջ խմբուած կը սպասէին անձկանօք Ս. Քահանայապետի ժամանումին՝ Արհ. Գերպ. Ս. Տէր-Ար-րահամեան, Արհ. Գերպ. Քէտիճեան, Գերպ. Սրբահայր Ուխտիա՝ Սրապիոն Վ. Ուլուհոճեան, Մխիթարեան բաղմաթիւ Հայրեր, աշակերտներ Աստուածաբանութեան ու Փիլիսոփայութեան, Լեւոնեան Քահ. Վարժարանի աշակերտութիւնը,



Սրբազան Քահանայապետը՝ խօսած պահում  
Il Santo Padre mentre parla



Սրբ. Պապը կ'ողջունէ Ամերիկացի սպաները  
Il Santo Padre saluta gli ufficiali Americani

Գերպ. Քահանաներ, Անարատ Յղութեան Հայ Կոյսեր, ընտանիքներ ու անհատներ, որոնց մէջ բաղմաթիւ հայ ուխտաւորներ՝ եկած զանազան տեղերէ, մանաւանդ Վենետիկէն, եւ Հռոմի հայ դաղութը: Ներկայ էին նաեւ Գերպ. Ումպերթոյ Դիոնիզի, եւ կարգ մը բարձրաստիճան ամերիկացի սպաներ, որոնց մէջ կը նշմարուէին Գնդապետ Քէլլի, Գնդապետ Լոնտոն, Մաճճիորէ Քարաֆա եւ ուրիշներ, որոնք այնքան ազնուօրէն նպաստած էին Ուխտաւոր Մխիթարեան Հայրերու եւ Սրբազան Սպաներու փոխադրութեան Վենետիկէն ի Հռոմ:

Դահլիճն յանկարծ լուսաւորուեցաւ, ղէմքերն ու սրտերը հրճուեցան ու գեր-

երկրային մթնոլորտ մը փոխադրուածի պէս զգացինք ինքզինքնիս՝ երբ Սրբազանը ընկերացած Վսեմ. Հոգեւոր Տիրոջմէ, որ նախապէս դացած էր իր յարգանքը ներկայացնելու Անոր, հասաւ մեր սպասման դահլիճը:

Ուրախութեան առաջին ու բնածին արտայայտութենէ մը վերջ՝ բոլոր ներկաներն աչք ու ափանջ դարձան՝ նայելու զմայլազին Սրբազանի աստուածաշնորհ կերպարանքին ու լսելու Անոր, որ կարճեւ բոլորովին եթերացած՝ սրտաբուխ ու հայրազորով կ'ուղղէր հետեւեալ շա՛տ իմաստալից խօսքերը, որոնց ահա հայերէն թարգմանութիւնը ղէմ գիմաց հրատարակուած իր խաւերէն բնագրին հետ:








raccomandazione per il presente e per l'avvenire: State fermi nella vostra fede, nella vostra fede piena, integra, inalterabile, a tutte le verità rivelate che la Chi sa insegna, a tutti i misteri di grazia di cui è dispensiera, senza lasciarvi mai sedurre e trascinare da correnti, che finalmente non terminano se non in un superficiale razionalismo, in una morale puramente umana e terrena, o troppo spesso anche nell'ateismo.

Nella santa liturgia, che abbiamo ieri celebrata con voi, il diacono pronunzia questa bella preghiera: «La santa Genitrice di Dio e tutti i Santi ci siano intercessori presso il Padre che è nei cieli, perchè si degni usarci misericordia e pietosamente salvi le sue creature. Onnipotente Signore Iddio, salvaci e abbi pietà di noi!». E il coro risponde: «O Cristo,... per l'interces-



Սրբ. Պապը իր Ս. Աջը համբուրել տուած պահում, առաջնորդուած վսեմ. Վարդինալէմ  
Il Santo Padre mentre porge a baciare la Sua Mano, accompagnato dall' Em.mo Cardinale

է այս առիթով խնդակցիլ ձեզի հետ: Եւ զոհ ձեր անցեալ հաւատարմութեան վրայ՝ ձեզի կ'ուղղենք այսպիսի հոգեկան խոր խորովութիւններու ժամանակ՝ ջերմագին յանձնարարութիւն մը, ներկային և ապագային համար. հաստատուն կեցեք ձեր հաւատքին մէջ, ձեր ամբողջական, անարատ, անփոփոխ հաւատքին մէջ, յայտնուած բոլոր ճշմարտութիւններուն՝ զոր եկեղեցին կը սորվեցնէ, բոլոր խորհուրդներուն շնորհիւ՝ որուն բաշխողն է, առանց երբեք հրապուրուելու և տարուելու հոսանքներէ, որ հուսկ չեն վերջանար՝ եթէ ոչ մակերեսային բանապաշտութեամբ մը, լոկ մարդկային և երկրաւոր բարոյականով մը, կամ շատ յաճախ՝ նաեւ անաստուածութեամբ:

Ս. Պատարագի խորհուրդին մէջ, զոր երէկ միասին կատարեցինք, սարկաւագը սա գեղեցիկ աղօթքը կ'ընէ. «Սուրբ Աստուածածինը և բոլոր սուրբերը բարեխօս բռնենք երկնաւոր Հօր առջեւ,



Ամերիկացի սպաներու խմբանկար, գերպ. Արքեպիսկոպոս Սրապիոն Արք. Ուլուհոցեանի հետ  
Il Gruppo degli ufficiali Americani con S. E. Mons. Abate Serapione Uluhogian



sione delle tue celesti Dominazioni, custodisci per sempre e rendi incrollabile la sede dell'Armenia». Tale è il voto del Nostro cuore per voi. E affinché il Nostro desiderio sia soddisfatto, e la pace, l'amore e la grazia del Redentore vi siano abbondantemente concessi, impartiamo a voi qui presenti e all'intero diletto popolo armeno con tutta l'effusione dell'animo Nostro l'Apostolica Benedizione.



Հայ Ուխտաւորներու խումբը՝ լուսանկարուած Վսեմ. Հոգեւոր Տիրոջ հետ  
Il gruppo dei pellegrini armeni, fotografati con Sua Em. il Card. Patriarca

որպէս զի հաճի մեզի ողորմիլ և գթարով փրկել իր արարածները։  
Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ և ողորմէ մեզի»։ Եւ դպիր-  
ներու խումբը կը պատասխանէ. «Քրիստոս... բարեխօսութեամբ  
երկնային զօրքերու միշտ անշարժ պահէ Հայկազնեաց Աթոռը»։ Այդ  
է Մեր սրտի մաղթանքը ձեզի համար։ Եւ որպէս զի Մեր փափաքը  
է կատարուի և փրկչին խաղաղութիւնը, սէրը և շնորհքը առատօրէն  
բաշխուի ձեզի՝ կը շնորհենք Մեր սրտի բոլոր զեղումով հոս ներ-  
կաներուդ և բովանդակ սիրելի հայ ժողովուրդին Առաքելական  
Օրհնութիւնը։

Այս աստուածաբեալ խօսքերն աւարտե-  
լէ վերջ բազկատարած ու աչքերը երկինք  
վերցուցած իր սրտի բոլոր զեղումով տը-  
րաւ իր Առաքելական աստուածաւանդ  
սուրբ Օրհնութիւնը, զոր ընդունեցաւ հայ  
ժողովուրդը խորին հաւատքով եւ բարե-  
պաշտութեամբ, եւ շատերը ուրախութեան  
եւ յուզումի արցունքով՝ ինչպէս յայտ-  
նապէս տեսանք։

Նոյն պահուն նաեւ լուսանկարներ քաշ-  
ուեցան զանազան դիրքերով։

Յետ ուսահամբոյրով ողջունելու երեք  
Արհիպատիւ բարձրաստիճան եկեղեցա-  
կանները, Սրբազան Պատրիարք հաճեցաւ մօ-  
տենալ ներկաներէն իւրաքանչիւրին, ո-

րոնք դարձեալ ծնրադիր կը համբուրէին  
Անոր Ս. Աջը։

Շատերուն ուղղակի հարցումներ ուղ-  
ղեց կամ տեղեկութիւն ուղեց Հոգ. Տի-  
գեղ կամ Սրբազանին կ'ընկերանար եւ  
լոյս տեսնէր, որ Սրբազանին կ'ընկերանար եւ  
ամէնուն իղձերուն թարգմանը կը դառ-  
նար հայրական գորովով։

Այս արարողութեան աւարտին, Սրբա-  
զանը կը ձգէր Սրահը խանդավառ ցոյ-  
ցերու եւ կեցցէներու մէջ մեր կողմէն։

Խումբը իջնելով յետոյ Ս. Դամասկոսի  
հրապարակը՝ լուսանկարուեցաւ Վսեմ.  
Հոգեւոր Տիրոջ հետ որպէս յաւերժական  
յիշատակ այդպիսի անզուգական օրուան։

ԽՄԲ.

### Կ' Ս. Ղ. ՕԹԷ

Կ'երգէ զօղանջն հոգեթով, Կ'երգեն սրտերն ալիւն...  
Երկրէ երկինք աստղածին՝ բազկատարած կը նայի  
Մարգն ու Աստուած նորահրաշ, մեծ Խորհուրդին օրհներգու,  
Բեմին առջեւ, ուր Կ'հսկէր իտալ տխրանն արուեստի։

Երկրէ երկինք աստղածին՝ բազկատարած կը նայի  
Ծիրանեփառ Քաջանան, խոնարհ և վեհ պաշտօնեայ.  
Կը սլանայ վեր աղօթքն իր՝ երբ հաշտարար աղանի,  
Տղմաշաղախ ողորմէն՝ ուր մարգն անվերջ կը սըգայ։

Ծիրանեփառ Քաջանան, խոնարհ և վեհ պաշտօնեայ,  
Վատիկանեան բարձունքէն ձգած կամար լուսեղէն,  
Արարատին ժպտելով հրաւեր սիրոյ կը կարգայ։

Վատիկանեան բարձունքէն ձգած կամար լուսեղէն,  
Իբր ծիածան լայնարձակ վարդաշէղեղ շընորհքի,  
Կը մրմնջէ, Տէր, գրկէ ցրուած մարդիկն համօրէն։

Ա. Ն.